

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Պետերբուրգի քաղաքալին դպրոցները—Առողջապահական ճաշարանները—Խմիչքների հարկի նոր ծրագիրը—Ակնաբույժերի թուղ խմբերը—Մենդելեևի գեկուցումը—Մոռացած գումարը—Ողերեութական տեղեկութիւնները—Նարոսլավի դասախօսարանը—Նրաժնական հոգեբանութեան մասին—Սիմաշկո—Խառն լուրերը—Նոր գրքերը—Կարևոր լուրերը—

Պետերբուրգում կան 291 քաղաքալին սկզբնական դպրոցներ, բայց սոցանից միայն 13-ը ունին սեփական շինութիւն, իսկ մնացեալները զետեղած են քրէհով վարձած տների մէջ, Վերջիններս մեծ մասամբ չեն համապատասխանում դպրոցական առողջապահական կանոններին, Բացի այդ շատ անգամ տուն չէ գտնում անտեղ, ուր աւելի կարևոր է դպրոցի գոյութիւնը, Նրբեմն դպրոցի բացումը առ միշտ թողնում է հէնց անպատճառով, որ լարմար տեղում բնակարան չէ ճարում:

Ներկայումս վերջապէս լարուցւել է ան հարցը, թէ արդեօք քաղաքը չէ կարող իւր դպրոցների համար առանձին շէնքեր կառուցանել, Ինչպէս ենթադրում է սորա համար կը ծախսւի մօտ 4 1/2 միլիոն ռուբլի, և եթէ քաղաքը պարտք վերցնէ վիշեալ գոմարը 5 տոկոսով, տարեկան վճարելիք տոկոսի գումարը աւելի փոքր կը լինի, քան թէ ծախսում է քրէհների վրայ վճարելով տարեկան 240,000 ռուբլի: Մայրաքաղաքի դոմալի ալդ մտադրութիւնը թէ համակրելի և թէ իրագործելի է, Նոր պիտի աղալիսի մտադրութիւն ունենալու հերթը մեր երկրի գլխաւոր քաղաքներին հասնի:

Առողջապահական ճաշարանների մեծ նշանակութիւնը, մանաւանդ չքաւոր դասակարգի համար, անհերքելի է: Բայց մանաւանդ անհրաժեշտ են նոքա տարալիտիկ հիւանդութիւնների ժամանակ: Այդ տեսակէտից շատ լաւ օրինակ կարող է լինել Նիժնեգորոդեան տոնալաճառի էժանագլին ճաշարանների և թէւարանների պատմութիւնը, որոնք հիմնւած են 1871 թւին խոլերայի ժամանակ, բայց շարունակւում են մինչև այժմ:

բացվելով իւրաքանչիւր տարի տօնաւաճառի ամիսներին: Աւետեղ տաք կերակուր է վաճառուում բաժինը երեքից մինչև հինգ կոպէկ: Կերակուրները պատրաստուում են բոլորովին թարմ մթերքներից: Քսան տարի շարունակվելով աղ հիմնարկութիւնները մեծ հեղինակութիւն են ձեռք բերել բանւորների մէջ և վերջ են տւել փթած և կասկածաւոր նիւթերից պատրաստուող կերակուրների վաճառման: Վաճառած ճաշերի և թեւաբաժինների քանակութիւնը անդադար աճում է: Օրինակ 1885 թվին բաց է թողած 7009 ճաշ և 110,101 թէւաբաժին: Իսկ անցեալ տարի ճաշերի թիւը հասել էր 60,000-ի ու թէւաբաժինների թիւը՝ 200,000-ի: Աւնպիսի մեծ և լայն հիմնարկութեան համար տօնաւաճառի առևտրականների կողմից նպաստ հարկաւորւելից անցեալ տարի միայն 1,500 ռուբլի: Ուրեմն նա մօտաւորապէս իւր ծախսը ծածկում է: Ո՛րքան կարևոր օրինակ է աղ բոլոր մարդաշատ քաղաքների համար մանաւանդ խոլերայի ժամանակ:

Այն հարցը, թէ ինչպէս է հարկաւոր կազմակերպել խմիչքներից վերցնող հարկերը, Ֆինանսական քաղաքականութեան դժւար խնդիրներից մէկն է: Առհասարակ հարկեր վերցնելու նպատակը նիւթական է: Կլիմային հարկերը վերցնում են պետական Ֆինանսը պահպանելու համար: Ուրեմն հարկ նշանակողը պիտի աշխատէ անպիսի ընթացքի մէջ դնել գործը, որ հարկի ենթարկուող ապրանքը ըստ կարելոյն աւելի գործածուելիւն ունենալ: Բաց կան ապրանքներ, ինչպէս օրինակ ոգելից խմիչքները, որոնց գործածութեան սահմանափակելը, չափաւորելը ցանկալի է բարոյական տեսակէտից: Հետևապէս խմիչքների հարկերի սխտեմը կարող է ունենալ կամ նիւթական և կամ բարոյական տեսակէտ:

Շատ անգամ պետութիւնները միակ ուշադրութիւնը նիւթական տեսակէտին դարձնելով, բարոյականը աչքից բաց են թողել, կամ թէ երկրորդին համեմատաբար հնչին նշանակութիւն են տւել: Բաց մեր դարում մարդասէր պետութիւնները եկան այն գիտակցութեանը, թէ նիւթականի պատճառով բարոյականի զոհելը լաւ հետևանքներ չէ ունենում և սկսելին ըստ աճմ վարել:

Ռուսաստանի համար խմիչքների հարկի նոր կազմած ծրագիրը աշխատել է միացնել նիւթական և բարոյական տեսակէտները: Թէ որքան լաջողութիւն կը գտնի նոր մշակած ծրագիրը, պիտի փորձը ցուց տալ: Բաց ի հարկէ նա անքան աւելի օգտակար կ'լինի, որքան աւելի է ի նկատի առել բարոյական տեսակէտը:

«Պետերբուրգի տեղեկութիւններ» լրագիրը խօսելով հարեցողութեան դէմ մաքառելու մասին, իմիջի ալլոց ցուց է տալիս, որ Սկանդի-

Նաւահալի գինեւոցները դէմ մաքառումը լաջողութիւն ունեցաւ ոչ միայն օրէնսդրութեան և նիւթական զոհողութիւնների շնորհիւ, այլ հարկաւորւեցին նոյնպէս ուրիշ միջոցները: Այնտեղ մի կողմից կռակով գինեւոցների դէմ ուղղակի միջոցներով, միւս կողմից անմիջապէս հիմնուած էին բազմաթիւ դպրոցներ, միջոցներ էին ձեռք առնուած ընթերցանութիւն տարածելու համար և լաւն կերպով կազմակերպուած էին բարոյական զարմուծութիւնների գործը:

Կոլերին խնամող կալերական հոգաբարձութիւնը դիմել է մամուլին, խնդրելով հրատարակել հետեւեալ հրաւերը: Կոլութիւնը մեծ անբաղդութիւն է մարդկային կեանքի մէջ, բայց Ռուսաստանում պատահում են բազմաթիւ մարդիկ, որոնց չուտափութ օգնութիւն հասցնելով կարելի է կուրանալուց ազատել: Բայց մենք ունինք աշակիսի փոքր թիւով աշխարհին հիւանդութեան մասնագէտներ, որ աշակիսի օգնութիւնը շատ քչերին է մատչելի, իսկ մեծամասնութիւնը ժամանակին օգնութիւն չ'ստանալով, կուրանում է առ միշտ: Ուստի կոլերին խնամող հոգաբարձութիւնը կամենում է կազմել աշխարհիկներից բաղկացած «Թուղ» խմբեր և ուղարկել նոցա կալսութեան զանազան կողմերը աշխարհաւ ունեցողներին օգնելու համար: Բայց չունենալով հարկաւոր նիւթական միջոցներ, հոգաբարձութիւնը դիմում է մասնաւոր բարեգործներին խնդրելով միջոց տալ իրան մարդկանց կուրանալուց ազատելու: Յոյս ունինք, որ մեր երկրումն էլ կը չափունին բարեգործներ, որոնք ալը հրաւերին արձագանք կը տան: Երևի Թուղ խմբերից մէկն էլ դէպի մեզ կը թռչէ:

Առևտրական ծովագնացութեան նպաստող ընկերութեան նիստում պրոֆ. Մենդելէւեւ մի զեկեցում արեց ալն մասին, թէ ինչպէս կարելի է զարգացնել Ռուսաստանի առևտրական ծովագնացութիւնը և նաւաշինութիւնը: Ընդունելով որպէս հիմք, որ ներկայումս ծովագնացութեան զարգանալը կախած է գլխաւորապէս քարածխի էփանութիւնից, գիտնականը հարկաւոր է համարում, որ Դոնէցի ածխահանքերից հասարակ ձևի երկաթուղու գծեր անցկացնեն դէպի ծովը չատկապէս քարածխի համար: Թէ ալը միջոցը և թէ դէպի Սև ծովը դնելիք նաւթախողովակը բաւականաչափ կը պակասեցնեն վառելիքի գինը, որի բարձր լինելն է գիտնականի կարծիքով ամենագլխաւոր արգելքը նաւագնացութեան զարգացման համար:

«Նոր ժամանակ» լրագրի մէջ Մարկով հարց է զարթնեցնում մի մոռացած գումարի մասին: 1861 թվի փետրւարի 19-ին հրատարակած ստորուկներին (Дворовыхъ людѣй) վերաբերեալ կանոնների 33-երորդ լօղածի հիման վերալ կալարութեան բոլոր ստորուկներից թուրքիանոց տուրք էր վերցնում «ծերացած, զառամեալ, հոգեկան և մարմնական անկատարութիւններ ունեցողների և բոլոր որբերի հոգատարութեան համար», որպէս ասած է լինեալ լօղածի մէջ թուրքիանոց տուրքի առնելը շարունակել է 6 տարեալ ընթացքում և մօտաւորապէս հասել է մինչև 4,200,000 թուրքու իսկ ալփմ, երբ 30 տարի է անցել, երևի դռմարը տոկոսներ առնելով կրկնապատկած կ'լինի: Մարկով վերջապէս է իւր խօսքը ասելով. «Գուցէ աչն մարդիկ, որոնք խնդրին մօտ ծանօթ են, կը բացատրեն նորան և բաւարարութիւն կը տան հասարակութեան իրաւացի հետաքրքրութեանը:

Կար ժամանակ, երբ մարդիկ հաւատացած էին, թէ բնական երեւոյթները կատարում են ոչ թէ հաստատ պատճառների ստիպմամբ, այլ ուղղակի պատահմամբ: Նրկրաշարժ էր լինում, նոքա մտածում էին, թէ սա կարող էր և չլինել: Փոթորիկներ էին բարձրանում, մարդիկ եղբակացնում էին, թէ հաստատածները բարկացել են մարդկանց մեղքերի պատճառով: Անձրեւ զաղարեցնելու համար քարի տակին կարմիր թել էին գնում: Իսկ անձրեւ ստանալու համար խումբ-խումբ փողոցներով շրջում էին: Բալց հետզհետէ նոքա եկան աչն գիտակցութեան, թէ բնական երեւոյթները բոլորովին հաստատ պատճառներից են լառաշնունում: Իսկ ալստեղից ծագեց աչն զաղալարը, թէ ուրեմն ամեն մի երևոյթ առաջուց կարելի է գուշակել:

Ապագայում մեծ նշանակութիւն կունենան գիտնական նախագուշակութիւնները, իսկ ներկայումս նոքա դեռ քիչ են զարգացած: Սակաչն ներկայումս էլ կարելի է լինում կարևոր օգուտներ բերել նախագուշակութիւնների միջոցով: Սորան ապացուց կարող է ծառայել աչն, որ արդէն շատ երկիրներում տարածած են օդերևութական հիմնարկութիւնները, որոնք մի կողմից հետազօտելով ամեն օր տեղի ունեցող օդալին երեւոյթները (անձրեւի, կարկտի քանակութիւնը, լաճախութիւնը և ալն), միւս կողմից որոշ հաշիւների հիման վերալ նախագուշակում են շուտով սպասելիք օդալին փոփոխութիւնները: Այդ նախատեղեկութիւններից մեծ օգուտ են ունենում մանաւանդ գիւղատնտեսները, որոնք վաղօրոք ուշ են դարձնում կալի մէջ եղած հացահատիկների վերալ և ալն:

Ռուսաստանում գլխաւոր ֆիզիքական դիտարանը սկսել է ալփմաւելի եռանդով վերաբերել դէպի իւր գործը: Ներկալ տարալ սկզբից

դիտարանը հրատարակում է ամսական տեղեկութիւններ, որոնցից կարող են օգտուել գիւղատնտեսները, իսկ ալթմ կամեմալով ըստ կարելոյն աւելի մատչելի և օգտակար դարձնել իւր հրատարակութիւնը, մամուլի միջոցով դիմում է Ռուսաստանի բոլոր գիւղատնտեսութեամբ պարագողներին և առաջարկում նորանց լալտնել իրանց փորձառութիւնից հանած կարծիքները, թէ որ տեղեկութիւնները աւելի կարևոր են և թէ ինչ ձևով մշակւած ցանկալի էր ստանալ օգերեութեական տեղեկութիւնները:

Բացի ալդ դիտարանը ցանկութիւն է լալտնում, որ նիւթական, տեխնիկական և ալլ հարկաւոր միջոցներ ձեռք առնւելին, որպէս զի մի կողմից հետազոտութիւնները աւելի լալնատարած լինելին, իսկ միւս կողմից որքան կարելի է արագութեամբ և հետազոտութեամբ կարողանալին տարածել նախագուշակութիւնները բոլոր գիւղատնտեսական շրջաններում:

Ապրիլի 10-ին՝ լրացաւ Եարոսլաւի ժողովրդական դասախօսարանի տասնամեակը: Այդ համակրելի հիմնարկութեան մէջ հրապարակաւ կարդացւում էին զանազան գրքովներ, Մուտքի գինը թանգ չէր, Սկզբում նշանակւած էր առաջնակարգ տեղերի համար 10 կոպ և երկրորդակարգերի համար 3 կոպ: Բայց շուտով քաղաքը սկսեց տարեկան 300 բուրլու նպաստ տալ դասախօսարանին և մուտքի վճարը վերացւեց: Անուհետև ունկնդիրների թիւը արագութեամբ աճեց և ծննդեան տօներից մինչև զատիկ իւրաքանչիւր ընթերցանութեանը լաճախում էին մինչև 600 ունկնդիրներ:

Տասն տարւալ ընթացքում եղել են 572 ընթերցանութիւններ, որոնք նիւթ են առել 216 գրքովներ հետեւալ բովանդակութեամբ. հոգևոր 92, ազգային պատմութիւն 53 և մնացած բաժիններից 81 գրքովներ, ի միջի ալլոց ձրիաբար բաժանւած են ունկնդիրներին 24,000 հատ զանազան թերթեր և գրքովներ, իւրաքանչիւր ընթերցանութիւնը բաղկացած էր լինում երկու մասից՝ հոգևորից և աշխարհալինից:

Տասնամեակի առիթով դուման միաձայն որոշեց քաղաքապլիսի միջոցով անկեղծ շնորհակալութիւն լալտնել ընթերցարանի բոլոր մասնակիցներին:

Ապրիլի 17-ին Մոսկալում դոկտոր Վիկտորով հասարակական դասախօսութիւն կարդաց երաժշտական հոգեբանութեան մասին: Յառաջաբանի մէջ դասախօսը բացատրեց, թէ ինչպէս են նալել երաժշտութեան վերալ հնադարեանները և ինչպէս էին նալում իղէալիստ—մետաֆիզիկոսները և հանճարաւոր երաժիշտները: Վերջապէս բացատրեց, թէ ինչ հալեացք ունի նորա վերալ ժամանակալից գիտութիւնը: Ապա զանազան փորձերով ցոլց տւեց, թէ ինչպիսի բազմատեսակ տպաւորութիւններ են

անում երաժշտական կտորները: Վերջապէս դասախօսը խօսեց երաժշտութեան բժշկող ազդեցութեան մասին, որ անում է նա տրամադրութեան հիւանդութիւնների վերադ: Նոյնպէս բացատրեց, թէ ինչի մէջն է կապանում երաժշտութեան էստետիկական և ոգևորիչ ներդրածութիւնը: Դասախօսին ճանապարհ գրին ծափահարութեամբ:

Ապրիլի 15-ին Պետերբուրգում մեռաւ Իւ. Ի. Սիմաչկո, որը Նանաւոր գործիչ էր մանկավարժական և գործադրական-բնագիտութեան ասպարէզներում: Նա ծնւել էր Վարչաւալում, ուտում էր առել կաղնուտի կորպուսում և սկզբում փոքր ժամանակ մատենատիկալի ուսուցիչ էր եղել գաւառական ուսումնարանում: Յետոյ նա ուսուցանում էր զինւորական ուսումնարաններում և անտառալին ինտիտուտում բնական գիտութիւններ: 1856 թւին Իւ. Ի. անդամ ճանապարհեց լուսաւորութեան միւնիստրութեան մէջ, որտեղ մնաց մինչև 1874 թիւը, որից չետոյ ստացաւ Ֆինանսական միւնիստրութեան մէջ անչափահաս բանւորների վերատեսչի պաշտօնը:

Բայց նորա գլխաւոր գործունէութիւնը մանկավարժական ասպարի-դումն էր: Բացի դասաւարտութիւնից նա պարապում էր դասական գրքեր և ձեռնարկներ հեղինակելով, հրատարակում էր «Ընտանիք և դպրոց» ամսագիրը և հրատարակեց Նոյնպէս մի շարք հանրամատչելի գրածքներ վերաբերեալ բնագիտութեան, գործադրական կենդանարանութեան, տեխնիկական կրթութեան և մանկավարժութեան: 1878 թւին Սիմաչկոն գնաց արտասահման Ֆինանսների միւնիստրութեան լանձնարարութեամբ, որ ալետեղ ուսումնասիրէ տեխնիկական և արհեստալին կրթութեան սիստեմը և 1885 թւին հրատարակեց «արհեստների դպրոցների կազմակերպութեան մասին» գրքոյկը:

Հանգուցեալը լալտնի է Նոյնպէս իւր մի քանի դուա գիտնական հետաքստութիւններով միջատների վերաբերեալ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:

Բերնի համալսարանի բժշկականութեան դոկտոր տիկին Բոգոլիւբսկայան, որը խուրբալի ժամանակ Տոմսկ քաղաքում աչքի ընկնող ծառաւորիւն մատուցեց, ի նշան վարձատրութեան իրաւունք է ստացել բժշկական ազատ գործունէութիւն ունենալ, միալն թէ Տոմսկի նահանգի սահմաններից ոչ դուրս:

Պետական կալածների միւնիստրութիւնը մտադիր է կապացնել մի շարք գիւղատնտեսական համաժողովներ: Առաջին համաժողովը պիտի լինի Սարատովում սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 10-ը և պիտի զբաղէ բազմաթիւ հարցերով, վերաբերեալ Ռուսաստանի գիւղատնտեսութեան ներկալ դրութեանը:

Կանանց բժշկական ինստիտուտ հիմնելու հարցը նորից զարթնել է: Ենթադրուով է առանձին խորհուրդ կազմել, որը վերջնականապես կը վճռէ հարցը: Խորհուրդը կը սկսի զբաղւել ոչ ուշ, քան աշունքին:

Պետերբուրգի լրագիրները լսել են, որ Սամարղանդը Տաշկենտի հետ երկաթուղով միացնելու խնդիրը արդէն սկզբունքով վճռած է: Մնում է որոշել, թէ որ մինիստրութեան լանձնել գործի գլուխ բերելը, կամ թէ արդեօք կարելի է լանձնել մասնաւոր ընկերութիւններին:

Ներկայումս մշակում են ալն օրէնքները, որոնց հիման վերալ կարելի է թույլ տալ մասնաւոր մարդկանց առանձին լարմարութիւններ ունեցող սեփական վագոններ ունենալ: Յապտնի է, որ առաջմ ապալիսի վագոններ կան նափթալին ապրանքների, սպիրտի, մսի և զարեջրի համար: Մտադրուով է շուտով մտցնել լարմարացրած մասնաւոր վագոններ և կաթնեղէնների համար:

Ֆինանսական մինիստրութիւնը եռանդով աշխատում է կանոնաւորել հացի առևտուրը: Պատրաստում են ալթմ նախկին հացալին խորհրդի աշխատութիւնները պետական խորհրդի հալեցողութեանը ներկայացնելու համար: Մինիստրութիւնն էլ իւր իրաւունքների սահմանի մէջ զանազան միջոցներ է ձեռք առնում: Օրինակ բոլոր բորսալին կոմիտեաներին հրաւեր է ուղարկած, որով առաջարկւում է ուղարկել մինիստրութեան հացի առևտրի մէջ եղած բոլոր սովորութիւնների մանրամասն նկարագիրը: Նոյնպէս բոլոր մաքսատներին չրջագիր է ուղարկւած, որով պահանջւում է ուղարկել մինիստրութեանը վաճառող և արտահանող հացահատիկների տեսակներից նմուշներ: Նոյնպէս ոչխատում են կանոնաւորել հացերի գինը ներքին շուկաներում:

Ոմն Տերեչչենկօ լանձնել է կառավարութեան օրինական ձևով 50 հազար ռուբլի ալն նպատակով, որ գումարը անձեռնմխելի դարձնելով նորա տոկոսները բաժանւեն բարեգործի հալքերի գիւղի և սորա չրջակա գիւղերի աղքատ բնակիչներին իւրաքանչիւր տարի ծննդեան և զատկի տօներին:

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐԳԵՐԻՑ ՅԻՇԵՆԳ.

Коженский Янъ Амосъ. Избранные педагогическія сочиненія Ч. I. Великая дидактика, переводъ съ латинскаго Адольфа. Москва, 1893 г. ц. 3 р, 50 к.

Յիշեալ գիրքը նշանաւոր տեղ է բռնում մանկավարժական գրականութեան մէջ, Նա որքան էլ հնացած լինի, ալնուամենայնիւ պարունակում է իւր մէջ բազմաթիւ ալնալիսի մտքեր, որոնց ղեռ մեր ժամանակում նորութիւն կարելի է համարել:

Чернышевский Н. Г. Эстетика и поэзия, спб. 1893 г. ц. 2 руб. Յարանի գրող Չերնիշևիսկու ազդ գիրքը պարունակում է հետեւեալ լոգ. ւածները: Վեղարկատի և իրականութեան խկական չարաբերութիւնը, Արիստոտելը բանաստեղծութեան մասին, Ջանազան ազգերի երգերը, և վերջապէս Լեսսինգ, նորա կեանքը և գործունէութիւնը:

Բացի աչդ ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք մի քանի ընտիր լոգւածների վերալ ամսագիրների վերջին համարների մէջ:

Русская Мысль, Апрель, Михайловский, Литература и жизнь. Միխալովսկին խօսում է նոր կազմող վեղարկատական չկուպի մասին, որի ներկայացուցիչներին անւանում են սիմուլիստներ: Նոյն համարի մէջ արժէ կարդալ Բիրիւկովիչի հետաքրքիր լոգւածը ժողովրդական բժշկականութեան մասին: Բանից դուրս է գալիս, որ ամբոխի բժշկականութիւնը, թէ և ունի իւր մէջ բազմաթիւ նախապաշարմունքներ, նոյն իսկ փնտաակար միջոցներ, աւնուամենայնիւ բովանդակում է և մեծ ճշմարտութիւններ փորձառութիւնից հանած, որոնցից շատ օգուտ կարող է քաղել գիտնական բժշկականութիւնը:

Сѣверный Вѣстникъ, Май Սորա մէջ շատ սիրուն է Ստորոժենկուի լոգւածը, որի վերնագիրն է. «Վարօտութեան և դարդի անգլիական բանաստեղծները»: Նոյն համարի մէջ սկսւած է Ջոլայի «Դոկտոր Պասկալ» նոր բովանդի թարգմանութիւնը, որի վերալ դարձնում ենք և հալ ընթերցողի ուշադրութիւնը: